# «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

**Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ**
**Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ


ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....................3

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ՝ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 Թ. ....................6

ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇԻՌ՝ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 Թ. ....................8

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 9

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվապահական հաշվառման վարման կանոնները և մեթոդները ....................10
2. Զուտ ակտիվներում փոփոխություններ տարվա համար ....................13
3. Լրացուցիչ մանրամասներ ....................14

3.1 Ֆինանսական գործիքների ներկայացումն՝ ըստ իրավական կամ առևտրային տեսակի ....................14
3.2 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումն՝ ըստ տեսակի ....................15
3.3 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումն՝ ըստ ժամկետայնության ....................16
3.4 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումն՝ ըստ ցուցակման կամ գնահատման արժույթի ....................17
3.5 Դեբիտորական և կրեդիտորական պարտքի ներկայացումն՝ ըստ տեսակի ....................17
3.6 Մասնակիցներին պատկանող ակտիվներ ....................17
3.7 Կառավարման վճարներ ....................18
3.8 Ստանձնած և տրամադրված պարտավորություններ ....................18
3.9 Այլ տեղեկատվություն ....................18
3.10 Բաշխման ենթակա միջոցների հատկացման աղյուսակ ....................19
3.11 Շահույթի (վնասի) և այլ բնորոշ հատկանիշների ներկայացման աղյուսակ վերջին հինգ ֆինանսական տարիների համար ....................20
3.12 Պորտֆելի ցուցակումը ....................21

Deloitte.

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում Պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Պահպանողական կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին՝

### Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Պահպանողական կենսաթոշակային ֆոնդի (այսուհետ՝ Ֆոնդի) կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, արտաբալանսային հաշվապահական հաշվեկշիռը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման կանոնների ու մեթոդների հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆոնդի ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները՝ Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* (*ՀԷՄՍԽ կանոնագիրք*) և մենք կատարել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ֆիրմաների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ»-ի, նրա անդամ ֆիրմաների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2019 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ֆոնդը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների  վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք

եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ֆոնդին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի տնօրեն

Երևան, Հայաստան
Ապրիլի 5, 2019 թ.

**Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ**
**Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ**

**Հաշվապահական հաշվեկշիռ՝ առ 31 դեկտեմբերի 2018 թ.**

| ՀՀ դրամով | ԱԿՏԻՎՆԵՐ<br>2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Հիմնական միջոցներ, զուտ** | **0.00** | **0.00** |
| **Ավանդներ** | **24,548,090,739.73** | **15,194,455,759.12** |
| **Ֆինանսական գործիքներ** | **51,250,803,316.03** | **36,193,006,546.79** |
| **Բաժնետոմսեր և համանման արժեթղթեր** | **0.00** | **0.00** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| Կարգավորորող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| **Պարտատոմսեր և համանման արժեթղթեր** | **29,979,094,596.27** | **20,186,817,149.90** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող պարտատոմսեր կամ համանման արժեթղթեր | 29,979,094,596.27 | 20,186,817,149.90 |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող պարտատոմսեր կամ համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| **Վարկային գործիքներ** | **0.00** | **0.00** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման գործիքներ | 0.00 | 0.00 |
| *Պայմանագրային վարկային գործիքներ (արժեկտրոններ)* | 0.00 | 0.00 |
| *Այլ վարկային գործիքներ* | 0.00 | 0.00 |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման գործիքներ | 0.00 | 0.00 |
| **Հավաքական ներդրումային գործիքներ** | **21,271,708,719.76** | **16,006,189,396.89** |
| Ընդհանուր նշանակության հավաքական ներդրումային գործիքներ փոխանցելի արժեթղթերում (UCITS) և ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլընտրանքային ներդրումային ֆոնդեր և դրանց համարժեքներ այլ երկրներում | 10,604,743,050.93 | 9,773,904,854.91 |
| Ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ անդամ այլ երկրներում | 0.00 | 0.00 |
| Ընդհանուր նշանակության պրոֆեսիոնալ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ անդամ այլ երկրներում և ցուցակված արժեթղթավորման կազմակերպություններ | 0.00 | 0.00 |
| Այլ պրոֆեսիոնալ ներդրումային ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ անդամ այլ երկրներում և ցուցակված արժեթղթավորման գործակալություններ | 1,793,278,915.81 | 0.00 |
| Այլ ոչ եվրոպական կազմակերպություններ | 8,873,686,753.02 | 6,232,284,541.98 |
| ***Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով*** | **0.00** | **0.00** |
| Վարկեր՝ հետվաճառքի գործարքների ներքո արժեթղթերի ձեռքբերման համար | 0.00 | 0.00 |
| Վարկեր՝ փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց | 0.00 | 0.00 |
| Փոխառնված արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| Հետգնման գործարքների ներքո վաճառված արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| Այլ ժամանակավոր գործարքներ | 0.00 | 0.00 |
| **Հեջավորման գործիքներ** | **0.00** | **0.00** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 |
| Այլ հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 |
| Այլ ֆինանսական գործիքներ | 0.00 | 0.00 |
| **Դեբիտորական պարտքեր** | **15,966,294.23** | **0.00** |
| Արժութային ֆորվարդ գործարքներ | 0.00 | 0.00 |
| Այլ | 15,966,294.23 | 0.00 |
| **Ֆինանսական հաշիվներ** | **2,941,625,600.04** | **521,416,650.61** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,941,625,600.04 | 521,416,650.61 |
| **Ընդամենը ակտիվներ** | **78,756,485,950.03** | **51,908,878,956.52** |

## Հաշվապահական հաշվեկշիռ՝ առ 31 դեկտեմբերի 2018 թ. (շարունակություն)

| ՀՀ դրամով | ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | |
|---|---|---|
| | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| **Մասնակիցներին պատկանող ակտիվներ** | | |
| **Կապիտալ** | **73,561,492,008.79** | **48,971,509,766.35** |
| **Բաշխման ենթակա նախորդ տարվա կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ (ա)** | **0.00** | **0.00** |
| **Հաջորդ ժամանակաշրջաններ փոխանցված (ա)** | **0.00** | **0.00** |
| **Տարվա իրացված կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ (ա,բ)** | **130,668,572.09** | **270,703,364.77** |
| **Արդյունք (ա,բ)** | **3,367,209,954.88** | **2,609,877,794.98** |
| **Մասնակիցներին պատկանող զուտ ակտիվներ (զուտ ակտիվներ)** | **77,059,370,535.76** | **51,852,090,926.10** |
| | | |
| **Ֆինանսական գործիքներ** | **0.00** | **0.00** |
| Ֆինանսական գործիքների փոխանցումներ | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 |
| Հետգնման գործարքների ներքո վաճառված արժեթղթերով վճարման ենթակա գումարներ | 0.00 | 0.00 |
| Փոխառնված արժեթղթերի գծով վերադարձման ենթակա միջոցներ | 0.00 | 0.00 |
| Այլ ժամանակավոր գործարքներ | 0.00 | 0.00 |
| | | |
| **Հեջավորման գործիքներ** | **0.00** | **0.00** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 |
| Այլ հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 |
| | | |
| **Կրեդիտորական պարտքեր** | **1,697,115,414.27** | **56,788,030.42** |
| Արժութային ֆորվարդ գործարքներ | 0.00 | 0.00 |
| Այլ | 1,697,115,414.27 | 56,788,030.42 |
| | | |
| **Ֆինանսական հաշիվներ** | **0.00** | **0.00** |
| Կարճաժամկետ վարկեր | 0.00 | 0.00 |
| Ստացված վարկեր | 0.00 | 0.00 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **78,756,485,950.03** | **51,908,878,956.52** |

(ա) ներառյալ ճշգրտումները
(բ) հանած ֆինանսական տարվա ընթացքում վճարված միջանկյալ բաշխումները

**Հաստատված է Ղեկավարության կողմից 2019 թվականի ապրիլի 5-ին:**

**Ժան Մազեյան**
Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ
գործադիր տնօրեն

Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ
Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ

## Արտահաշվեկշիռ՝ առ 31 դեկտեմբերի 2018 թ.

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Հեջային գործառնություններ | | |
| Պայմանագրեր կարգավորվող կամ համանման շուկաներում | 0.00 | 0.00 |
| Արտաբորսայական (OTC) պայմանագրեր | 0.00 | 0.00 |
| Այլ պայմանագրային պարտավորություններ | 0.00 | 0.00 |
| Այլ գործառնություններ | 0.00 | 0.00 |
| Պայմանագրեր կարգավորվող կամ համանման շուկաներում | 0.00 | 0.00 |
| Արտաբորսայական (OTC) պայմանագրեր | 0.00 | 0.00 |
| Այլ պայմանագրային պարտավորություններ | 0.00 | 0.00 |

Հաստատված է Ղեկավարության կողմից 2019 թվականի ապրիլի 5-ին:

**Ժան Մազեջյան**
Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի գործադիր տնօրեն

## Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ
## Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ

### Եկամուտների և ծախսերի հաշվետվություն
### 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| ՀՀ դրամով | 2018 թ. | 2017 թ. |
|---|---|---|
| **Եկամուտներ ֆինանսական գործառնությունների գծով** | | |
| Եկամուտներ ավանդներից և ֆինանսական հաշիվներից | 925,287,941.52 | 1,060,547,339.01 |
| Եկամուտներ բաժնետոմսերից և համանման արժեթղթերից | 0.00 | 483,125.56 |
| Եկամուտներ պարտատոմսերից և համանման արժեթղթերից | 2,439,027,242.68 | 1,500,650,791.19 |
| Եկամուտներ վարկային գործիքներից | 0.00 | 0.00 |
| Եկամուտներ արժեթղթերի ժամանակավոր ձեռքբերումից և օտարումից | 0.00 | 0.00 |
| Եկամուտներ հեջավորման գործիքներից | 0.00 | 0.00 |
| Այլ ֆինանսական եկամուտներ | 110,562,072.44 | 64,540,970.71 |
| **Ընդամենը (1)** | **3,474,877,256.64** | **2,626,222,226.47** |
| **Վճարներ ֆինանսական գործառնությունների գծով** | | |
| Վճարներ արժեթղթերի ժամանակավոր ձեռքբերման և օտարման գծով | 0.00 | 0.00 |
| Վճարներ հեջավորման գործիքների գծով | 0.00 | 0.00 |
| Վճարներ ֆինանսական պարտավորությունների գծով | 0.00 | 0.00 |
| Այլ ֆինանսական վճարներ | 0.00 | 0.00 |
| **Ընդամենը (2)** | **0.00** | **0.00** |
| **Զուտ եկամուտ ֆինանսական գործառնություններից (1 - 2)** | **3,474,877,256.64** | **2,626,222,226.47** |
| Այլ եկամուտ (3) | 0.00 | 0.00 |
| Կառավարման վճարներ և մաշվածության հատկացումներ (4) | 708,881,390.42 | 466,332,842.92 |
| **Տարվա զուտ եկամուտ (Տ.214-17-1) (1-2+3-4)** | **2,765,995,866.22** | **2,159,889,383.55** |
| Հասույթի ճշգրտում (5) | 601,214,088.66 | 449,988,411.43 |
| Ֆինանսական տարվա ընթացքում վճարված զուտ եկամտի միջանկյալ բաշխում (6) | 0.00 | 0.00 |
| **Զուտ շահույթ (1 - 2 + 3 - 4 + 5 + 6)** | **3,367,209,954.88** | **2,609,877,794.98** |

**Հաստատված է Ղեկավարության կողմից 2019 թվականի ապրիլի 5-ին:**

**Ժան Մազեջյան**
Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ
գործադիր տնօրեն

## 1. Հաշվապահական հաշվառման վարման կանոնները և մեթոդները

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Այլընտրանքային զուտ կապիտալի 2014-1 կանոնակարգով (ANC Regulation) նախատեսված ձևաչափով, որի ընդունումից հետո չեղարկվել է Կապիտալի շուկաների և արժեթղթերի (CRC Regulation) 2003-02 կանոնակարգը:

Կիրառելի են հաշվապահական հաշվառման հետևյալ համընդհանուր սկզբունքները, մասնավորապես՝

- արժանահավատ ներկայացում, համեմատականություն, գործունեության անընդհատություն
- բարեխիղճ գործունեություն և վստահելիություն,
- ողջամտություն,
- կիրառվող մեթոդների չփոփոխելը մեկ ժամանակաշրջանից մյուսը՝ առանց համապատասխան ներկայացման:

Կայուն եկամտաբերությամբ արժեթղթերից հասույթը ճանաչվում է փաստացիորեն ստացված տոկոսային հիմունքով: Արժեթղթերի ձեռքբերումները և օտարումները ճանաչվում են ինքնարժեքով:

Պորտֆելի հաշվառման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային արտահայտությամբ ներկայացված դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների նկատմամբ հաշվարկված տոկոսային դրույք՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (%): Հաշվետվություններում ներկայացված հաշվետու ժամանակաշրջանը 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարին է:

Ֆոնդի կառավարիչն է «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն: Ֆոնդի վարչարարությունը պատվիրակվել է «ԿԱՍԵԻՍ Ֆանդ ադմինիստրեյշն» բաժնետիրական ընկերությանը (CACEIS Fund Administration): Ֆոնդի պահառուն և մասնակիցների ռեեստրավարը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն է:

Ֆոնդը կենսաթոշակային ֆոնդ է, որը կառավարվում է ակտիվների անկախ պրոֆեսիոնալ կառավարիչների կողմից, մինչև գումարները վճարվում են կենսաթոշակային տարիքը լրացած մասնակիցներին: Ֆոնդի մասնակիցները կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների սեփականատերերն են:

Ֆոնդի ակտիվները ներդրվում են Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում՝ արտարժութային ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը: Ֆոնդի նպատակն է առավելագույնի հասցնել ակտիվների եկամտաբերությունը՝ ֆոնդի ակտիվների 25 տոկոսը ներդնելով բաժնային գործիքներում, բաժնային ֆոնդերում և բաժնային համարժեք գործիքներում, իսկ մնացածը՝ պարտատոմսերում, պարտատոմսերի ֆոնդերում, դրամային շուկայի գործիքներում, ավանդներում և այլ ակտիվներում: Թիրախային խումբ են հանդիսանում կենսաթոշակային խնայողություն իրականացնողները՝ ռիսկի միջին հակվածությամբ:

**Ակտիվների գնահատման կանոնները.** ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են պատմական արժեքով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում իրենց ներկա արժեքով, որն իրենց վերջին հասանելի շուկայական արժեքն է, կամ շուկայի բացակայության դեպքում արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Արժեթղթերի ներկա արժեքի միջև տարբերությունները որոշվում են վերը նշված եղանակով և նրանց սկզբնական պատմական արժեքը ճանաչվում է հաշվետվություններում՝ որպես «գնահատումներում փոփոխություն»: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առքուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են վերը նշված եղանակով և այնուհետև փոխարկվում պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

**Ավանդներ և ֆինանսական հաշիվներ.** ավանդները գնահատվում են գծային մեթոդով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկերում կանխիկ միջոցները:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են տվյալ օրվա շուկայի փակման դրույթյամբ գործող գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների կողմից ծանուցված փակման գներով: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի գծով հաշվեգրված տոկոսը հաշվարկվում է մինչև ակտիվի գնահատման ամսաթիվը:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները, հաշվի առնելով վերջին էական գործարքներում օգտագործված գները:

**Պայմանագրային վարկային գործիքներ (արժեկտրոններ).** պայմանագրային վարկային գործիքները, որոնք ակտիվորեն առքուվաճառքի չեն ենթարկվում էական գումարներով, գնահատվում են ակտուարային սկզբունքով՝ ստորև նշված ամսաթվերով, գումարած թողարկողի առանձնահատուկ բնութագրերը ներկայացնող լրացումները:

Մեկ տարի կամ պակաս ժամկետայնությամբ արժեկտրոնները գնահատվում են եվրոյի միջբանկային առաջարկի գնով (Euribor):

Մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ արժեկտրոնները գնահատվում են միջնաժամկետ տոկոսակիր գանձապետական պարտատոմսերի զերիշխող փոխարժեքով կամ, ավելի երկարաժամկետ արժեկտրոնների համար (BTAN)՝ կարճաժամկետ կտրվածքով փոխարկելի գանձապետական պարտատոմսերի (OAT) փոխարժեքով:

Երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ պայմանագրային վարկային գործիքները կարող են գնահատվել գծային մեթոդով:

Հայկական գանձապետական պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի յուրաքանչյուր օրվա համար հրապարակած շուկայական դրույքաչափը:

**Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (ՓԱՀՆԳ/UCITS).** UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքով:

**Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով.** հետվաճառքի գործարքների ներքո պահվող արժեթղթերը հաշվառվում են ակտիվներում «Վարկեր՝ փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց» տողում՝ պայմանագրում նշված գնով, գումարած ստացվելիք հաշվեգրված տոկոսը:

Հետգնման գործարքների ներքո թողարկողին վաճառված արժեթղթերը հաշվառվում են գնման պորտֆելում իրենց ընթացիկ արժեքով: Համապատասխան պարտավորությունը հաշվառվում է վաճառքի պորտֆելում՝ պայմանագրում նշված գնով, գումարած ստացվելիք հաշվեգրված տոկոսը:

Փոխառությամբ տրված արժեթղթերը գնահատվում են իրենց ընթացիկ արժեքով և հաշվառվում «Վարկեր՝ փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց» տողում:

Փոխառնված արժեթղթերը հաշվառվում են ակտիվներում «Փոխառնված արժեթղթեր» տողում՝ պայմանագրում նշված գնով, և պարտավորություններում «Հետգնման գործարքների ներքո վաճառված արժեթղթերով վճարման ենթակա գումարներ» տողում՝ պայմանագրում նշված գնով, գումարած վճարվելիք հաշվեգրված տոկոսը:

***Հեջավորման գործիքներ***

**Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման հեջավորման գործիքներ**

Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման հեջավորման գործիքները գնահատվում են օրվա հաշվարկային գնով:

**Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման հեջավորման գործիքներ**

**Սվոփեր.** փոխարժեքային սվոփերը և/կամ ֆորվարդային արժութային գործարքները գնահատվում են իրենց շուկայական արժեքով՝ շուկայում գործող տոկոսադրույքների (և/կամ փոխարժեքների) ապագա տոկոսային հոսքերի զեղչմամբ հաշվարկված գնով: Այս գինը ճշգրտվում է դեֆոլտի ռիսկը հաշվի առնելու համար:
Ինդեքսային սվոփերը գնահատվում են ակտուարական սկզբունքով՝ կոնտրագենտի կողմից տրամադրված փոխարժեքի հիման վրա:

Այլ սվոփերը գնահատվում են իրենց շուկայական արժեքով կամ ֆոնդի կառավարչի կողմից սահմանված եղանակով:

**Արտահաշվեկշռային պարտավորություններ.** ֆիքսված հեջային պայմանագրերը ներկայացվում են «արտահաշվեկշռային պարտավորություններ»-ում իրենց շուկայական արժեքով՝ պորտֆելում կիրառված փոխարժեքով: Պայմանական հեջավորման գործիքները փոխարկվում են իրենց համապատասխան համարժեքներով:

Սվոփ գործարքները հաշվառվում են անվանական արժեքով կամ դրան համարժեք արժեքով, եթե առկա չէ անվանական արժեք:

**Կառավարման վճարներ.** կառավարման վճարները հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա՝ ամենօրյա հիմունքով: Այս վճարները ներկայացվում են Ֆոնդի եկամուտների և ծախսերի հաշվետվությունում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են Ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ աուդիտի վճարը և Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի վճարը: Կառավարման վճարները չեն ներառում դիլինգի ծախսերը և հաշվարկվում են տարեկան 1.1%-ի չափով, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը: Ֆինանսական հաշվետվություններում աուդիտի և երաշխիքային ֆոնդերի վճարները ներկայացվում են որպես կառավարման վճարների մաս:

**Զուտ շահույթի բաշխումը.** ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) ներառում է տոկոսների, պարտքի, պարգևավճարների, հատկացումների, շահաբաժինների ամբողջությունը, գումարած՝ կանխիկից ստացված եկամուտը, հանած կառավարման վճարները և ֆինանսական ծախսերը: Չբացահայտված կամ իրացված կապիտալի հավելաճից օգուտները կամ կապիտալի գծով վնասները չեն դիտարկվում որպես հասույթ, ինչպես նաև, որպես այդպիսին, չեն դիտարկվում թողարկման/մարման վճարները:

Բաշխման համար հասանելի գումարներն են՝ ժամանակաշրջանի զուտ շահույթը, գումարած հաջորդ ժամանակաշրջան փոխանցված միջոցները, հանած կամ գումարած տվյալ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հասույթի ճշգրտման հաշիվների մնացորդները:

***Ժամանակաշրջանի ընթացքում թողարկված փայերի հավասարեցում***

**Հասույթի ճշգրտում.** բոլոր փայատերերը պետք է ստանան մեկ փայի դիմաց բաշխման ենթակա հավասարաչափ եկամուտ, անկախ փայի թողարկման ամսաթվից: «Հասույթի ճշգրտում» տողում ներկայացված ուղղիչ մեխանիզմի միջոցով չեզոքացվում է թողարկումների և մարումների ազդեցությունը մեկ փայի դիմաց ստացվող եկամտի վրա: Ակտիվի զուտ արժեքը հաշվարկելիս Ֆոնդը որոշում է բաշխման ենթակա եկամուտը: Թողարկումները կամ մարումները ազդեցություն չեն գործում փայերի կատարողականի վրա: Հասույթի ճշգրտման մեխանիզմն ապահովում է թողարկումների և մարումների չեզոքությունը՝ մեկ փայի դիմաց բաշխման ենթակա եկամտի գծով:

**Օգուտներ և վնասներ.** ֆինանսական տարվա զուտ իրացված օգուտները (հանած կառավարման վճարներից և իրացված վնասներից) կհամալրեն նախորդ ֆինանսական տարիների միևնույն տեսակի իրացված օգուտները, եթե ֆոնդը բաշխած կամ կուտակած չլինի իր

օգուտները, ինչպես նաև կիամայրի կամ կնվազեցնի իրացված օգուտների գծով հավասարեցնող հաշիվները:

Ֆոնդի ակտիվներից ձևավորված ողջ եկամուտը, որը ներառում է, բայց չի սահմանափակվում իրացված կապիտալի հավելաճով, կայուն եկամտաբերությամբ արժեթղթերի գծով տոկոսագումարների վճարումներով և այլնով, պետք է վերաներդրվի Ֆոնդում: Շահույթի բաշխում չի նախատեսվում:

**Փայերի բաժանորդագրում և մարում.** Ֆոնդի փայերի թողարկումն ու մարումը կատարվում են թողարկման և մարման ամսաթվի դրությամբ յուրաքանչյուր փայի համար զուտ ակտիվների ամենավերջին հասանելի արժեքի հիման վրա: Փայերի թողարկման համար որևէ վճար կամ գումար չի գանձվում: Մարման վճարները կատարում է դիմողը, որոնց դրույքաչափերը տատանվում են 0-ից 2%՝ կախված մարման գործարքի տեսակից և սահմանվում են Ֆոնդի կանոններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում համապատասխան կիրառելի օրենսդրությամբ:

## 2. Զուտ ակտիվներում փոփոխություններ տարվա համար

| ՀՀ դրամով | 2018 թ. | 2017 թ. |
|---|---|---|
| **Զուտ ակտիվներ ֆինանսական տարվա սկզբում** | **51,852,090,926.10** | **31,372,980,701.23** |
| Թողարկումներ (ներառյալ ֆոնդի կողմից ստացված թողարկման վճարները) | 23,068,406,153.60 | 15,505,443,155.36 |
| Մարումներ (հանած ֆոնդի կողմից ստացված մարման վճարները) | (10,809,679.10) | (14,394,613.71) |
| Ավանդների և ֆինանսական գործիքների նկատմամբ իրացված կապիտալի հավելաճից օգուտներ | 199,260,304.30 | 175,314,176.22 |
| Ավանդների և ֆինանսական գործիքների նկատմամբ իրացված կապիտալի գծով վնասներ | (43,695,138.43) | (4,781,806.02) |
| Հեջավորման գործիքների նկատմամբ իրացված կապիտալի հավելաճից օգուտներ | 0.00 | 0.00 |
| Հեջավորման գործիքների նկատմամբ իրացված կապիտալի գծով վնասներ | 0.00 | 0.00 |
| Դիլինգի ծախսեր | (3,068,225.87) | (4,099,233.56) |
| Փոխարժեքային օգուտ/վնաս | (191,581,864.50) | 239,368,410.38 |
| **Գնահատումների տարբերություններում փոփոխություններ (ավանդների և ֆինանսական գործիքների գծով)** | **(577,227,806.56)** | **2,422,370,752.60** |
| Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N | 3,692,196,644.54 | 4,269,424,451.10 |
| Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N-1 | (4,269,424,451.10) | (1,847,053,698.50) |
| **Գնահատումների տարբերություններում փոփոխություններ (հեջավորման գործիքների գծով)** | **0.00** | **0.00** |
| Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N | 0.00 | 0.00 |
| Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N-1 | 0.00 | 0.00 |
| Նախորդ ֆինանսական տարվանից կուտակված կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ | 0.00 | 0.00 |
| Կապիտալի հավելաճից զուտ օգուտներին և կապիտալի գծով զուտ վնասներին բաշխում նախորդ ֆինանսական տարվանից | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական տարվա զուտ շահույթ | 2,765,995,866.22 | 2,159,889,383.55 |
| Զուտ եկամտին բաշխման ենթակա տարրերի հատկացում | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական տարվա ընթացքում վճարված զուտ եկամտի միջանկյալ բաշխումներ | 0.00 | 0.00 |
| Այլ հոդվածներ | 0.00 | 0.00 |
| **Զուտ ակտիվներ ֆինանսական տարվա վերջում** | **77,059,370,535.76** | **51,852,090,926.10** |

## 3. Լրացուցիչ մանրամասներ

### 3.1 Ֆինանսական գործիքների ներկայացումն՝ ըստ իրավական կամ առևտրային տեսակի

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | % |
|---|---|---|
| Ակտիվներ | | |
| **Պարտատոմսեր և համանման արժեթղթեր** | | |
| Կարգավորվող կամ համանման շուկայում առքուվաճառքի ենթարկվող ֆիքսված տոկոսադրույքով պարտատոմսեր | 29,979,094,596.27 | 38.90 |
| **Ընդամենը պարտատոմսեր և համանման արժեթղթեր** | **29,979,094,596.27** | **38.90** |
| **Վարկային գործիքներ** | | |
| Գանձապետական պարտատոմսեր | 0.00 | 0.00 |
| **Ընդամենը վարկային գործիքներ** | **0.00** | **0.00** |
| Պարտավորություններ | | |
| **Ֆինանսական գործիքների փոխանցման գործարքներ** | **0.00** | **0.00** |
| **Ընդամենը ֆինանսական գործիքների փոխանցման գործարքներ** | **0.00** | **0.00** |
| Արտահաշվեկշռային պարտավորություններ | | |
| **Հեջավորման գործիքներ** | **0.00** | **0.00** |
| **Ընդամենը հեջավորման գործիքներ** | **0.00** | **0.00** |
| **Այլ գործառնություններ** | **0.00** | **0.00** |
| **Ընդամենը այլ գործառնություններ** | **0.00** | **0.00** |

## 3.2 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումն՝ ըստ տեսակի

| ՀՀ դրամով | Ֆիքսված տոկոսադրույքով | % | Փոփոխական տոկոսադրույքով | % | Վերանայման ենթակա տոկոսադրույք | % | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Այլ | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Ավանդներ | 24,548,090,739.73 | 31.86 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պարտատոմսեր և համանման արժեթղթեր | 29,979,094,596.27 | 38.90 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Վարկային գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 360,540,432.49 | 0.47 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Արտահաշվեկշռային պարտավորություններ** | | | | | | | | |
| Հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Այլ գործառնություններ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

### 3.3 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումն` ըստ ժամկետայնության

| | | | | | | | | | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամով | Մինչև 3 ամիս | % | 3 ամիս – 1 տարի | % | 1 - 3 տարի | % | 3 - 5 տարի | % | Ավելի քան 5 տարի | % |
| **Ակտիվներ** | | | | | | | | | | |
| Ավանդներ | 3,087,592,109.59 | 4.01 | 13,815,950,684.94 | 17.93 | 7,644,547,945.20 | 9.92 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պարտատոմսեր և համանման արժեթղթեր | 244,172,808.07 | 0.32 | 1,955,844,734.01 | 2.54 | 7,082,133,998.68 | 9.19 | 4,665,438,468.38 | 6.05 | 16,031,504,587.13 | 20.80 |
| Վարկային գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարք արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 2,941,625,600.04 | 3.82 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Պարտավորություններ** | | | | | | | | | | |
| Ժամանակավոր գործարք արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Արտահաշվեկշռային պարտավորություններ** | | | | | | | | | | |
| Հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ակտիվներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

## 3.4 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումն՝ ըստ ցուցակման կամ գնահատման արժույթի

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | | Եվրո | | Այլ արտարժույթ | |
| | Գումարը | % | Գումարը | % | Գումարը | % |
| **Ակտիվներ** | | | | | | |
| Ավանդներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Բաժնետոմսեր և համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պարտատոմսեր և համանման արժեթղթեր | 1,983,730,781.52 | 2.57 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Վարկային գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Փայեր փոխադարձ ներդրումային ֆոնդերում | 15,759,783,463.84 | 20.45 | 5,511,925,255.92 | 7.15 | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Դեբիտորական պարտք | 15,966,294.23 | 0.02 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 2,559,829,700.66 | 3.32 | 21,296,396.98 | 0.03 | 0.00 | 0.00 |
| **Պարտավորություններ** | | | | | | |
| Ֆինանսական գործիքների փոխանցման գործարքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պարտավորություններ | 1,618,253,657.69 | 2.10 | 25,312.88 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Արտահաշվեկշռային պարտավորություններ** | | | | | | |
| Հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

## 3.5 Դեբիտորական և կրեդիտորական պարտքի ներկայացումն՝ ըստ տեսակի

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|
| **Դեբիտորական պարտք** | |
| Արժեկտրոններ և կանխիկով շահաբաժիններ | 15,966,294.23 |
| **Ընդամենը դեբիտորական պարտք** | **15,966,294.23** |
| **Կրեդիտորական պարտք** | |
| Գնումներից հետաձգված պարտավորություն | 1,618,253,657.69 |
| Կառավարման վճարներ | 78,407,774.46 |
| Այլ կրեդիտորական պարտք | 453,982.12 |
| **Ընդամենը կրեդիտորական պարտք** | **1,697,115,414.27** |

## 3.6 Մասնակիցներին պատկանող ակտիվներ

### Թողարկված կամ մարված փայերի քանակը

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|
| | Փայեր | Արժեք |
| Ֆինանսական տարվա ընթացքում թողարկված փայեր | 15,517,116.126382 | 23,068,406,153.60 |
| Ֆինանսական տարվա ընթացքում մարված փայեր | (7,374.194547) | (10,809,679.10) |
| **Զուտ թողարկումներ/մարումներ** | **15,509,741.931835** | **23,057,596,474.50** |

**Թողարկման և/կամ մարման վճարներ**

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ<br>Արժեք |
|---|---|
| **Ընդամենը ստացված թողարկման և/կամ մարման վճարներ** | **20,529.36** |
| Ընդամենը ստացված թողարկման վճարներ | 0.00 |
| Ընդամենը ստացված մարման վճարներ | 20,529.36 |

## 3.7 Կառավարման վճարներ

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|
| Միջնորդավճար անդերրայթինգի գծով | 0.00 |
| Կառավարման ֆիքսված վճար | 708,881,390.42 |
| Կառավարման ծախսերի տոկոսը | 1.10 |
| Փոփոխական կառավարման ծախսեր | 0.00 |
| Միջնորդ գործակալի հատուցում | 0.00 |

## 3.8 Ստանձնած և տրամադրված պարտավորություններ

Ֆոնդի կողմից ստացված երաշխիքներ՝ չկան:
Այլ ստանձնած և/կամ տրամադրված պարտավորություններ՝ չկան:

## 3.9 Այլ տեղեկատվություն

**Ժամանակավորապես ձեռք բերված արժեթղթերի գնանշված շուկայական արժեքը**

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|
| Հետվաճառքի գործարքների ներքո պահվող արժեթղթեր | 0.00 |
| Փոխառնված արժեթղթեր | 0.00 |

**Գրավադրված արժեթղթերի գնանշված շուկայական արժեքը**

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|
| Գրավադրված, սակայն չվերադասակարգված ֆինանսական գործիքներ | 0.00 |
| Որպես գրավ ստացված, սակայն հաշվեկշռում չճանաչված ֆինանսական գործիքներ | 0.00 |

**Ֆոնդի կողմից պահվող խմբային ֆինանսական գործիքներ**

| ՀՀ դրամով | ISIN կոդ | Արժեթղթի անվանումը | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Բաժնետոմսեր | | | 0.00 |
| Պարտատոմսեր | | | 0.00 |
| Արժեկտրոններ | | | 0.00 |
| Ընդհանուր նշանակության հավաքական ներդրումներ փոխանցելի արժեթղթերում/ UCITS | LU1681042609 | AMUNDI MSCI EUROPE UCITS ETF – EUR C | 2,774,760,352.59 |
| | LU1162497744 | AMUNDI AF BOND US CORPORATE OU CAP | 721,690,648.17 |
| | LU1681039647 | AMUNDI IS E COR UEC | 943,885,987.52 |
| | LU0557861514 | AMUNDI BOND GLOBAL AGGREGATE -OU- CAP | 2,941,037,648.57 |
| | LU1681040652 | AMUNDI US T 7-10 UEC | 3,223,368,414.08 |
| | LU0557865341 | AMUNDI BOND GLOBAL AGGREGATE -OU- CAP | 1,793,278,915.81 |
| Հեջավորման գործիքներ | | | 0.00 |

## 3.10 Բաշխման ենթակա միջոցների հատկացման աղյուսակ

**Շահույթին վերաբերող միջոցների բաշխման ենթակա մասնաբաժնի հատկացման աղյուսակ**

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Դեռևս չհատկացված միջոցներ** | | |
| Հաջորդ ժամանակաշրջաններ փոխանցված | 0.00 | 0.00 |
| Շահույթ | 3,367,209,954.88 | 2,609,877,794.98 |
| **Ընդամենը** | **3,367,209,954.88** | **2,609,877,794.98** |

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Հատկացում** | | |
| Բաշխում | 0.00 | 0.00 |
| Հաջորդ ժամանակաշրջաններ փոխանցված | 0.00 | 0.00 |
| Կապիտալացված | 3,367,209,954.88 | 2,609,877,794.98 |
| **Ընդամենը** | **3,367,209,954.88** | **2,609,877,794.98** |

### Կապիտալի հավելաճից օգուտներին կամ կապիտալի գծով վնասներին վերաբերող միջոցների բաշխման ենթակա մասնաբաժնի հատկացման աղյուսակ

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Դեռևս չհատկացված միջոցներ** | | |
| Նախորդ ֆինանսական տարվանից կուտակված կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ֆինանսական տարվա կապիտալի հավելաճից զուտ իրացված օգուտներ և կապիտալի գծով զուտ իրացված վնասներ | 130,668,572.09 | 270,703,364.77 |
| Կապիտալի հավելաճից զուտ օգուտներին և կապիտալի գծով զուտ վնասներին բաշխման ենթակա տարրերի հատկացում | 0.00 | 0.00 |
| **Ընդամենը** | **130,668,572.09** | **270,703,364.77** |

| ՀՀ դրամով | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Հատկացում** | | |
| Բաշխում | 0.00 | 0.00 |
| Բաշխման ենթակա՝ կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ | 0.00 | 0.00 |
| Կապիտալացված | 130,668,572.09 | 270,703,364.77 |
| **Ընդամենը** | **130,668,572.09** | **270,703,364.77** |

## 3.11 Շահույթի (վնասի) և այլ բնորոշ հատկանիշների ներկայացման աղյուսակ վերջին հինգ ֆինանսական տարիների համար

| | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|---|
| **Գլոբալ զուտ ակտիվներ ՀՀ դրամով** | **77,059,370,535.76** | **51,852,090,926.10** | **31,372,980,701.23** | **15,353,627,188.66** | **5,822,668,746.29** |
| Զուտ ակտիվներ ՀՀ դրամով | 77,059,370,535.76 | 51,852,090,926.10 | 31,372,980,701.23 | 15,353,627,188.66 | 5,822,668,746.29 |
| Բաժնետոմսերի/փայերի թիվը | 51,646,896.875913 | 36,137,154.944078 | 24,720,998.297233 | 13,940,833.967441 | 5,638,252.608876 |
| Բաժնետոմսին/ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեք ՀՀ դրամով | 1,492.0426 | 1,434.8692 | 1,269.0823 | 1,101.3421 | 1,032.7080 |
| Մեկ փայի գծով կուտակված կապիտալի հավելաճից զուտ իրացված օգուտներ և կապիտալի գծով զուտ իրացված վնասներ ՀՀ դրամով | 2.53 | 7.49 | 6.34 | 0.47 | (1.67) |
| Մեկ փայի գծով կուտակված զուտ իրացված եկամուտ ՀՀ դրամով | 65.20 | 72.22 | 66.79 | 64.23 | 26.36 |

## 3.12 Պորտֆելի ցուցակումը

| | | | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | |
|---|---|---|---|---|---|
| **Արժեթղթի անվանումը** | **ISIN** | **Արժույթ** | **Քանակ** | **Շուկայական արժեք** | **%** |
| **ԱՎԱՆԴՆԵՐ** | | | | | |
| **Ավանդներ հայկական բանկերում, 10.0-12.2%, 16/01/2019 - 08/04/2020** | | **ՀՀ ԴՐԱՄ** | **22,580,000,000** | **24,548,090,739.73** | **31.86** |
| **ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ** | | | | | |
| **Կարգավորվող կամ համանման շուկայում առքուվաճառքի ենթարկվող** | | | | | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | | | | | |
| ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՆԱԽԿԻՆ ԱՐՄԻՄՊԵՔՍԲԱՆԿ 9.0% 13-07-18 | AMAMRBB23ER9 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 500,000 | 244,172,808.07 | 0.32 |
| ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՆԱԽԿԻՆ ԱՐՄԻՄՊԵՔՍԲԱՆԿ 9.5% 24-09-21 | AMAMRBB2DER0 | ՀՀ ԴՐԱՄ | 270,000,000 | 278,524,129.50 | 0.36 |
| ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՆԱԽԿԻՆ ԱՐՄԻՄՊԵՔՍԲԱՆԿ 9.75% 12-02-22 | AMAMRBB2EER8 | ՀՀ ԴՐԱՄ | 400,000,000 | 408,049,470.00 | 0.53 |
| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 6.5% 29-10-19 | AMARBKB2DER2 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 192,600 | 95,399,624.66 | 0.12 |
| ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ 10.5% 03-08-19 | AMCOVSB23ER7 | ՀՀ ԴՐԱՄ | 100,000,000 | 105,300,950.00 | 0.14 |
| ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ 9.5% 26-04-21 | AMCOVSB25ER2 | ՀՀ ԴՐԱՄ | 380,000,000 | 385,767,127.00 | 0.50 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 12.0% 17-02-21 | AMGB10172212 | ՀՀ ԴՐԱՄ | 746,000,000 | 847,181,548.09 | 1.10 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 10.0% 29-10-23 | AMGB1029A235 | ՀՀ ԴՐԱՄ | 714,100,000 | 769,724,188.24 | 1.00 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 11.0% 29-10-25 | AMGB1029A250 | ՀՀ ԴՐԱՄ | 1,949,852,000 | 2,184,249,074.91 | 2.83 |
| ՀՀ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ 10.0% 29-10-27 | AMGB1029A276 | ՀՀ ԴՐԱՄ | 3,752,000,000 | 3,951,494,736.73 | 5.13 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 11.0% 07-02-28 | AMGB20072287 | ՀՀ ԴՐԱՄ | 425,555,000 | 483,869,064.64 | 0.63 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 13.0% 17-02-32 | AMGB20172327 | ՀՀ ԴՐԱՄ | 4,075,480,000 | 5,180,331,428.58 | 6.71 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 13.0% 29-10-36 | AMGB2029A366 | ՀՀ ԴՐԱՄ | 3,250,833,000 | 4,037,347,572.08 | 5.23 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9.0% 29-04-19 | AMGN36294194 | ՀՀ ԴՐԱՄ | 398,654,000 | 408,239,316.91 | 0.53 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 8.0% 29-04-20 | AMGN36294202 | ՀՀ ԴՐԱՄ | 157,000,000 | 161,385,852.46 | 0.21 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 8.0% 29-04-19 | AMGN60294193 | ՀՀ ԴՐԱՄ | 206,000,000 | 209,943,760.41 | 0.27 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 10.0% 29-04-20 | AMGN60294201 | ՀՀ ԴՐԱՄ | 2,404,029,000 | 2,539,407,823.11 | 3.30 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 10.0% 29-04-21 | AMGN60294219 | ՀՀ ԴՐԱՄ | 554,949,000 | 595,011,352.67 | 0.77 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9.0% 29-10-22 | AMGN60294227 | ՀՀ ԴՐԱՄ | 1,644,000,000 | 1,723,361,811.55 | 2.24 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 8.0% 29-04-23 | AMGN60294235 | ՀՀ ԴՐԱՄ | 1,500,000,000 | 1,505,796,385.50 | 1.95 |
| ԻՆԵԿՈԲԱՆԿ 5.25% 11-06-21 | AMINECB22ER8 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 574,600 | 278,165,378.16 | 0.36 |
| ԻՆԵԿՈԲԱՆԿ 5.25% 15-11-21 EMTN | AMINECB23ER6 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 718,000 | 347,382,160.32 | 0.45 |
| ԻՆԵԿՈԲԱՆԿ 9.75% 15-11-21 EMTN | AMINECB24ER4 | ՀՀ ԴՐԱՄ | 211,000,000 | 211,054,860.00 | 0.27 |
| «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ 12.0% 24-06-19 | AMNMCCB2BER5 | ՀՀ ԴՐԱՄ | 64,750,000 | 66,507,962.50 | 0.09 |
| «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ 10.0% 09-11-19 | AMNMCCB2GER4 | ՀՀ ԴՐԱՄ | 242,380,000 | 252,075,200.00 | 0.33 |
| «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ 10.0% 28-11-19 | AMNMCCB2HER2 | ՀՀ ԴՐԱՄ | 371,650,000 | 385,178,060.00 | 0.50 |
| «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ 8.3% 23-02-21 | AMNMCCB2IER0 | ՀՀ ԴՐԱՄ | 397,000,000 | 416,327,069.62 | 0.54 |

## Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ
## Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ

**2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)**

| | | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | |
|---|---|---|---|---|---|
| Արժեթղթի անվանումը | ISIN | Արժույթ | Քանակ | Շուկայական արժեք | % |
| ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ 8.0% 16-04-19 | AMSWISB22ER5 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 537,000 | 267,090,105.93 | 0.35 |
| ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ 8.5% 27-04-20 | AMSWISB23ER3 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 624,000 | 321,096,549.97 | 0.42 |
| ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ 11.5% 24-05-23 | AMSWISB27ER4 | ՀՀ ԴՐԱՄ | 245,000,000 | 258,506,613.09 | 0.34 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 6% 30/09/2020 | XS0974642273 | ՀՀ ԴՐԱՄ | 374,000 | 186,024,511.13 | 0.24 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 7.15% 26-03-25 | XS1207654853 | ՀՀ ԴՐԱՄ | 374,000 | 194,212,710.19 | 0.25 |
| ՖԻՆԿԱ 12.75% 27-04-19 | AMFNCAB22ER2 | ՀՀ ԴՐԱՄ | 160,000,000 | 166,109,753.60 | 0.22 |
| ՖԻՆԿԱ 10.5% 18-12-21 | AMFNCAB23ER0 | ՀՀ ԴՐԱՄ | 200,000,000 | 200,302,000.00 | 0.26 |
| ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ ՈՒՎԿ ՓԲԸ 6.9% 20-07-20 | AMFSCRB22ER5 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 100,000 | 50,186,933.09 | 0.07 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ** | | | | **29,714,777,892.71** | **38.56** |
| **ՀՈՒՆԱՍՏԱՆ** | | | | | |
| ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ 8.455% 27-06-20 | AMBSTBB21ER4 | ՀՀ ԴՐԱՄ | 262,000,000 | 264,316,703.56 | 0.34 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՒՆԱՍՏԱՆ** | | | | **264,316,703.56** | **0.34** |
| **Կարգավորվող կամ համանման շուկայում առքուվաճառքի ենթարկվող** | | | | **29,979,094,596.27** | **38.90** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ** | | | | **29,979,094,596.27** | **38.90** |
| **ՀԱՎԱՔԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ** | | | | | |
| **Ընդհանուր նշանակության հավաքական ներդրումներ փոխանցելի արժեթղթերում (UCITS) և ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլընտրանքային ներդրումային ֆոնդեր այլ երկրներում** | | | | | |
| **ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ** | | | | | |
| AMUNDI IS E COR UEC | LU1681039647 | ԵՎՐՈ | 7,958 | 943,885,987.52 | 1.22 |
| AMUNDI AF BOND US CORPORATE OU CAP | LU1162497744 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,300 | 721,690,648.17 | 0.94 |
| AMUNDI BOND GLOBAL AGGREGATE-OU-CAP | LU0557861514 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 4,550 | 2,941,037,648.57 | 3.82 |
| AMUNDI MSCI EUROPE UCITS ETF – EUR C | LU1681042609 | ԵՎՐՈ | 25,763 | 2,774,760,352.59 | 3.6 |
| AMUNDI US T 7-10 UEC | LU1681040652 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 26,280 | 3,223,368,414.08 | 4.17 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ** | | | | **10,604,743,050.93** | **13.75** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ընդհանուր նշանակության հավաքական ներդրումներ փոխանցելի արժեթղթերում (UCITS) և այլընտրանքային ներդրումային ֆոնդեր ոչ պրոֆեսիոնալ ներդրողների և համարժեքների համար՝ այլ երկրներում** | | | | **10,604,743,050.93** | **13.75** |
| **Այլ պրոֆեսիոնալ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ այլ անդամ երկրներում և ցուցակված արժեթղթավորման գործակալություններ** | | | | | |
| **ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ** | | | | | |
| AMUNDI INDEX MSCI EMU-OE | LU0557865341 | ԵՎՐՈ | 2,337.236 | 1,793,278,915.81 | 2.33 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ** | | | | **1,793,278,915.81** | **2.33** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ Այլ պրոֆեսիոնալ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ այլ անդամ երկրներում և ցուցակված արժեթղթավորման գործակալություններ** | | | | **1,793,278,915.81** | **2.33** |

| | | | 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | |
|---|---|---|---|---|---|
| Արժեթղթի անվանումը | ISIN | Արժույթ | Քանակ | Շուկայական արժեք | % |
| Այլ ոչ-եվրոպական կազմակերպություններ | | | | | |
| ԱՄՆ | | | | | |
| ISHARES S AND P 500 INDEX FUND | US4642872000 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 57,100 | 1,414,252,774.37 | 1.84 |
| MSCI EMERGING MARKETS INDEX FD | US4642872349 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 136,512 | 2,586,695,878.72 | 3.36 |
| ISHARES MSCI JAPAN ETF | US46434G8226 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 40,067 | 4,872,738,099.93 | 6.32 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ** | | | | **8,873,686,753.02** | **11.52** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ Այլ ոչ-եվրոպական կազմակերպություններ** | | | | **8,873,686,753.02** | **11.52** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ** | | | | **21,271,708,719.76** | **27.60** |
| **ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ** | | | | **15,966,294.23** | **0.02** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | **(1,697,115,414.27)** | **(2.20)** |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ** | | | | **2,941,625,600.04** | **3.82** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | **77,059,370,535.76** | **100** |

| | | | |
|---|---|---|---|
| **«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ** | | **ՓԱՅ 51,646,896.875913** | **ՀՀ ԴՐԱՄ 1,492.0426** |